



Humanitarian Aid
and Civil Protection



Save the Children

Փոխըմբռնման հուշագիր

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության միջև

Սույն փոխըմբռնման հուշագիրը (ՓՀ) կնքվում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի և «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության միջև (այսուհետ «Կողմեր»): Կողմերը կհամագործակցեն «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Աղետների ռիսկերի նվազեցման ներառական ծրագիր – 2» շրջանակներում:

Նախադրյալներ

«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությունը ստացել է դրամաշնորհ Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության հարցերով գլխավոր վարչության աղետներին նախապատրաստման ծրագրից «Աղետների ռիսկերի նվազեցման ներառական ծրագիր – 2» ծրագրի իրականացման համար: Ծրագիրը նախատեսված է իրականացնել Երևանի և Հայաստանի մարզերի՝ Արագածոտնի, Շիրակի, Գեղարքունիքի և Լոռու 21 հատուկ հաստատություններում, որոնք ընդգրկված են եղել նոխորդ ծրագրում, ինչպես նաև 20 ներառական դպրոցներում և 21 մանկապարտեզներում:

Ծրագրի նպատակն է նվազեցնել աղետների ազդեցությունը բնակչության խոցելի խմբերի վրա՝ բարձրացնելով երեխաների և խնամակալների զգոնությունը և աղետների արձագանքման կարողությունները: Այս նպատակով, ծրագիրը խնդիր է դնում բարձրացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների՝ ներառյալ հատուկ կարիքներով երեխաների, նրանց ուսուցիչների և խնամակալների/դայակների պատրաստվածությունը արտակարգ իրավիճակներում՝ ապահովելով ԱՌՆ տեղեկատվության, ընթացակարգերի և դրանց կիրառման մատչելիությունը:

Ծրագրի առավել արդյունավետ իրականացման, ընդհանուր մոտեցումների հստակեցման և կրկնօրինակումից խուսափելու նպատակով «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» Հայաստանյան ներկայացուցչությունը սերտորեն համագործակցելու է ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, Հայկական Կարմիր Խաչի և ՕՔՄՖԱՄ կազմակերպությունների հետ:

Ծրագրի իրականացման 15 ամիսների ընթացքում Լոռու մարզի շուրջ 1800 երեխա, 400 ուսուցիչ և դաստիարակ 3 հատուկ դպրոցներից և խնամքի հաստատություններից, 2 ներառական դպրոցներից և 3 մանկապարտեզներից կընդգրկվեն ծրագրում՝ որպես անմիջական շահառուներ:

Լոռու մարզի ծրագրի թիրախ հաստատությունների թվում են՝ Վանաձորի մանկատունը, Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոցը, Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցը, Վանաձորի թիվ

6 և 25 ներառական դպրոցները, Վանաձորի թիվ 2 և 5 նախակրթարանները և Սպիտակի թիվ 2 նախակրթարանը:

I. Համագործակցության նպատակը

Ծրագիրն ընդգրկում է աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) դաշտը, որը պահանջում է բազմակողմանի համագործակցություն և մտտեցումներ:

Ծրագրի բազմակողմանի ներգրավվածությունն ապահովելու համար նմանատիպ փոխըմբռնման հուշագրեր կստորագրվեն բոլոր պատասխանատու նախարարությունների և մարզպետարանների հետ:

Կողմերը համաձայնել են համագործակցել ծրագրի շրջանակներում կատարվող աշխատանքների անխափան իրականացման համար ուղղված ծրագրի նպատակների կատարմանը:

II. Կողմերի պարտականությունները

Ելնելով համաձայնագրի պայմաններից յուրաքանչյուր կողմի ընթացակարգերից և գործելակերպից՝ «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներակայացուցչությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանը պարտավորվում են կատարել հետևյալը.

Ա) «Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներակայացուցչությունը կիրականացնի հետևյալ գործողությունները.

ա) Մշակել կրթական և ուսուցողական նյութեր, իրականացնել ԱՌՆ, Երեխաների պաշտպանություն աղետների ժամանակ, Առաջին բուժ օգնություն, Վաղ ահազանգման համակարգեր թեմաներով դասընթացներ: Վերապատրաստել հատուկ դպրոցների, խնամքի հաստատությունների, ներառական դպրոցների և մանկապարտեզների ուսուցիչներին և աշխատակազմին վերոնշյալ թեմաներով:

- Իրականացնել վերապատրաստողների վերապատրաստում՝ նպատակ ունենալով պատրաստել ԱՌՆ դասընթացավարներ:
- Դասընթացներում ընդգրկել այնպիսի թեմաներ, ինչպիսիք են արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ հիմնական գործողությունները և ընթացակարգերը, ինչպես նաև տվյալ հաստատությունների երեխաների հատուկ կարիքներին արձագանքելու գործողությունները և միջոցառումները:
- Երեխաներին սովորեցնել համարժեք վարքագիծ արտակարգ իրավիճակներում և հնարավորություն ընձեռել ուսուցիչներին և աշխատակազմին արձագանքելու նման իրավիճակներին պատշաճորեն:

բ) Աշակցել հաստատություններում աղետների կառավարման հանձնաժողովների ձևավորմանը, որոնցում կընդգրկվեն ուսուցիչներ, դայակներ, վարչական աշխատակիցներ, ինչպես նաև աշակերտներ և ծնողներ:

- Ձևավորել Աղետների կառավարման հանձնաժողովներ /ԱԿՀ/ թիրախ հաստատություններում, որոնք կղեկավարեն հաստատության աղետներին պատրաստվածության ռազմավարությունը, ինչպես նաև միջնորդ կհանդիսանան հատուկ դպրոցի և տեղական ԱՌՆ մարմինների միջև:
- Աջակցել ԱԿՀ-ին մշակել գործողություններ, որոնք պետք է կիրառվեն աղետների ժամանակ և կբարձրացնեն ուսուցիչների և աշխատակազմի տեղեկացվածությունը արտակարգ իրավիճակներում իրենց դերի և պարտականությունների վերաբերյալ:
- գ) Ստեղծել տարածքային աղետների կառավարման թիմեր, որոնցում կընդգրկվեն հաստատությունների ղեկավարներ, պոլիկլինիկաների, հիվանդանոցների, ոստիկանության և տեղական ԱԻ բաժնի ներկայացուցիչներ:
- Կազմակերպել դարձնաթանցներ թիմերի անդամների համար ներառական ԱՌՆ, երեխաների պաշտպանություն աղետների ժամանակ, վաղ ահազանգման համակարգեր թեմաներով
- Իրականացնել համակարգված արձագանքման վարժանքներ

դ) Մշակել և իրականացնել փոքրամասշտաբ ուսումնական վարժանքներ՝ համայնքային աջակցությամբ և մասնակցությամբ:

- Աջակցել ԱԿՀ-ներին արտակարգ իրավիճակների պատրաստվածության և հակահրդեհային ուսումնական վարժանքների իրականացման գործում:

ե) Անվտանգության պլանների վերանայում, առաջին անհրաժեշտության պարագաների տրամադրում:

- Աջակցել դպրոցների և մանկապարտեզների ռիսկերի գնահատմանը և արտակարգ իրավիճակների պլանների նախագծմանը, ինչպես նաև ապահովել երեխաների մասնակցությունը այս գործընթացում: Կանցկացվեն տարհանման վարժանքներ՝ ուսուցիչների և ԱԻՆ փորձագետների հսկողությամբ:
- Աջակցել հանձնաժողովներին՝ արտակարգ իրավիճակների տարեկան գործողությունների պլանի մշակման գործում: Հանձնաժողովի անդամները ԱՌՆ դասընթացավարների հետ համատեղ կմշակեն գործողությունների պլան տվյալ շինության համար և կներկայացնեն տեղական համապատասխան մարմիններին:
- Իրազեկել և պատրաստել հանձնաժողովների անդամներին՝ կիրառելու հատուկ կարիքներով երեխաների անվտանգության անհրաժեշտ պայմաններին համապատասխան պլաններ և միջոցառումներ,
- Գնահատել շենքային պայմանները, և վերացնել անվտանգության և մատչելիության խոչընդոտները, ինչպես նաև մատչելի դարձնել տարհանման ուղիները՝ ԱՌՆ դասընթացավարների, ծրագրային անձնակազմի, տեխնիկական փորձագետների և համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ համագործակցության արդյունքում:
- Ծրագրում ընդգրկված դպրոցները և մանկապարտեզները ապահովել հիմնական օգնության և անվտանգության պարագաներով: Հիմնական պարագաները, ինչպիսիք են առաջին օգնության պարագաները, հակահրդեհային

անվտանգության և ԱՌՆ պարագաները, կրճատվեն մասնակից հաստատության ԱԿՀ-ին:

զ) Ապահովել հատուկ կարիքներով երեխաների անվտանգությունն ապահովող հատուկ պայմանների և միջոցառումների առկայությունը՝ ԱՌՆ պետական քաղաքականությունում և կանոնակարգերում:

- Համագործակցային միջավայրի ստեղծման միջոցով, քայլեր ձեռնարկել աջակցելու կառավարությանը և համայնքներին, բարձարցնել երեխաների պաշտպանվածությունը աղետների վտանգից՝ հատկապես շեշտադրելով հատուկ կարիքներ ունեցող երեխաների համար անհրաժեշտ պայմանները: Քայլեր ձեռնարկել սերտացնելու թիրախ հաստատությունների և տեղական ԱՌՆ մարմինների միջև կապերը և ամրապնդել համագործակցության դաշտը:

է) Համապատասխանեցնել և բարելավել աղետների կառավարման առկա պլանները:

- Քննարկել արտակարգ իրավիճակների և աղետների արձագանքման տեղական առկա պլանները՝ աջակցելով աղետների կառավարման տեղական մարմիններին ներառելու հատուկ կարիքներով երեխաներին անհրաժեշտ պայմանները և կարիքները:
- Ուսումնասիրել ԱՌՆ առկա կանոնակարգերը, ընթացակարգերը և կիրառությունները, ապա դրա հիման վրա առաջարկություններ մշակել՝ ներկայացնելու ԱՌՆ գործընկերներին և պետական պատասխանատու անձանց:

ը) Մերտորեն համագործակցել ՀՀ կառավարության հետ՝ խթանելու ներառական ԱՌՆ կանոնակարգերի ներդրումը:

- Համագործակցել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հետ բոլոր երեխաների համար ներառական պետական ԱՌՆ կանոնակարգերի, ընթացակարգերի և վարժանքների իրականացումն ապահովելու համար:
- Պատրաստել և հրատարակել ներառական ԱՌՆ նյութերի օրինակներ և նմուշներ, ապա տրամադրել դրանք համապատասխան շահագրգիռ կողմերին և պետական պատասխանատու անձանց:
Մշակել կրթական նյութեր երեխաների համար, փորձարկել դրանք և տրամադրել պետական համապատասխան մարմիններին՝ դրանց հետագա գործածումը ապահովելու համար:

Բ) ՀՀ Լոռու մարզպետարանը ծրագրի շրջանակներում կաջակցի հետևյալ գործողությունների իրականացմանը

Ակտիվորեն մասնակցել ծրագրի իրականացման փուլերին, ապահովելով՝

- Վանաձորի մանկատան, Վանաձորի թիվ 1 հատուկ դպրոցի, Սպիտակի թիվ 1 հատուկ դպրոցի, Վանաձորի թիվ 6 և 25 ներառական դպրոցների, Վանաձորի թիվ 2 և 5 նախակրթարանների և Սպիտակի թիվ 2 նախակրթարանի աշխատակազմի, Արտակարգ իրավիճակների, կրթության և ընտանիքի, կանանց և երեխաների

իրավունքների պաշտպանության վարչությունների մասնագետների համագործակցություն ծրագրի անձնակազմի հետ և ծրագրի իրականացման համար անհրաժեշտ աջակցության տրամադրում՝ ներառյալ ակտիվ մասնակցությունը համապատասխան միջոցառումներին՝ ծրագրի ողջ ընթացքում:

- Ինստիտուցիոնալ աջակցության տրամադրում հաստատություններում աղետների կառավարման հանձնաժողովների ձևավորման հարցում, որոնցում կընդգրկվեն ուսուցիչներ, դայակներ/դաստիարակներ, վարչական աշխատակիցներ, ինչպես նաև աշակերտներ և ծնողներ:
- Ակտիվ աջակցություն և մասնակցություն հատուկ դպրոցների և խնամքի հաստատությունների տարհանման վարժանքներին:
- Մերտ համագործակցություն թիրախ հաստատությունների և տեղական ԱՌՆ մարմինների միջև:
- Համապատասխան մասնակցություն արտակարգ իրավիճակների և աղետների արձագանքման տեղական պլանների քննարկմանը՝ աջակցելով աղետների կառավարման տեղական մարմիններին ներառելու հատուկ կարիքներով երեխաների անհրաժեշտ պայմանները և կարիքները:

III. Փոփոխությունները և հուշագրի կասեցումը

Սույն փոխըմբռնման հուշագրում կատարված որևէ փոփոխություն կատարվում է գրավոր և ստորագրվում կողմերի կողմից:

Կողմերի համաձայնությամբ սույն փոխըմբռնման հուշագրում կարող են կատարվել փոփոխություններ կամ լրացումներ, որոնք կհանդիսանան սույն փաստաթղթի անբաժանելի մասը:

Մասնակիցներից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել իր մասնակցությունը սույն ՓՀ-ին՝ առնվազն երեսուն (30) օր առաջ գրավոր ծանուցելով մյուս մասնակիցներին:

IV. Ծանուցումը

Սույն ՓՀ-ի վերաբերյալ ցանկացած ծանուցում պետք է կողմերի կողմից ստորագրվի և ուղարկվի ներքևում նշված հասցեներով:

V. Ժամկետը

VI. Սույն ՓՀ-ը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից մինչև 2015 Հուլիսի 31-ը: Բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

VII. Անբաժանելիությունը

Սույն ՓՀ-ը ամբողջական համաձայնության փաստաթուղթ է, որը ստորագրված է վերջինիս մեջ նշված նպատակների իրականացման համար:

Հետագա բոլոր ծրագրերը և/կամ համաձայնությունները պետք է ստորագրվեն առանձին՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Ի հավաստումն սույն ՓՀ-ի կողմերը ստորագրում են սույն փաստաթուղթը հայերեն լեզվով, երկու օրինակից, ստորև նշված օրը


Կողմերի ստորագրությունները

ՀՀ Լոռու մարզպետարան

Ք. Վանաձոր, Հայքի հրապարակ

Արթուր Նալբանդյան

Մարզպետ


(ստորագրություն)

21.08.2014թ.
(ամսաթիվ)



«Մեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ»
հայաստանյան ներակայացուցչություն

ք. Երևան, Ազատության պող. 27, 3-րդ հարկ



21.08.14.
(ամսաթիվ)
Կ.Տ.